ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԿԱՏԱՐՈՂ - ՄԵԼԻՆԵ ՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ - ԿԱՐԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……3

ԳԼՈՒԽ 1. 1.1.ԻՆՏԵԳՐՈՒՄ, ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……4

1.2. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ……10

ԳԼՈՒԽ 2 2.1.ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ……13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցումներ: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում, որոնցով պայմաններ կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար: Ինտեգրված ուսուցման վերաբերյալ դեռ իրենց ժամանակին գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժագետներ՝ Յ. Ա. Կոմենսկին, Յ. Հ. Պեստալոցցին, Վ. Սուխոմլինսկին, Ի. Պ. Պոդլասին: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը: Ինտեգրում նշանակում է մասերի միավորում ամբողջի մեջ : Կամ լատիներենից թարգմանաբար նշանակում է ամբողջի վերականգնում մասերի միավորումով, ինչը ոչ թե մասերի մեխանիկական միավորում է ենթադրում, այլ փոխազդեցություն, փոխարտահայտում, փոխադարձ դրսևորում, գիտելիքների սինթեզ: Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագուն բնագավառներից մեկն է, որի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է: Այն ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների, համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ:

Թեմայի արդիականությունը:Ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկը ինտեգրված դասն է: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ՝ ապահովելով բազմակողմանի գիտելիքներ, հետաքրքիր ու բովանդականլից դարձնելով ուսումնական գործընթացը: Որո՞նք են ինտեգրված դասի առավելությունները, և պե՞տք է այսօր սովորողին դասաժամի այդ ձևը: Այո՛, այսօր

կարևորվում է ինտեգրված ուսուցման կիրառումը՝ որպես կրթության որակի բարձրացման գործոն: Այս խնդրի լուծումը բազմաշերտ է և պահանջում է տարբեր մասնագետների՝ մանկավարժների, սոցիոլոգների, հոգեբանների միջամտությունը:

Ուսումնասիրության նպատակը: Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով:

Ուսումնասիրության խնդիրները: Ինտեգրված ուսուցումը խնդիր է դնում բարձրացնել սովորողների ակտիվությունը, ուսուցման գործընթացն դարձնել ավելի ակտիվ ու հետաքրքիր՝ նպաստելով խմբերով աշխատելուն: Վերջինիս հիմնական և առաջադիրն խնդիրներն են ուսման գործընթացում պահպանել հետևյալ հիմնական սկզբունքները՝ զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ, անձնական պատասխանատվություն, կառուցողական փոխկախվածություն, հավասարաչափ մասնակցություն:

ԳԼՈՒԽ 1

1.1.ԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողունակություններ, նոր հմտություններ: Այս պայմաններում կարևոր է կրթության և հանրակրթության դերի վերաիմաստավորումը: Կրթական փոփոխությունների, զարգացման ուղղություններն ու մոտեցումները պահանջում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման

այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն :

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,

2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,

3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,

4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,

5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ:

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ: Ինտեգրված դասերի ժամանակ միջառարկայական կապերը, արտացոլելով շրջակա աշխարհի երևույթների ու գործընթացների փոխկապակցությունները, մեծ դեր են խաղում սովորողների մոտ համակարգային մտածողության զարգացման գործում, դրանք հնարավորություն են տալիս որևէ ուսումնական առարկայի ուսուցման արդյունքում կազմավորված կարողունակությունները, հմտություններն ու գիտելիքները փոխանցել այլ առարկաների բնագավառ:

Անդրադառնալով ուսուցման դրդապատճառներին՝ նկատենք, որ դրանց ձևավորմանը կարելի է հասնել ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման միջոցով՝ուղղորդելով սովորողներին օգտագործելու սեփական ստեղծագործական հնարավորությունները և ձևավորելու հետազոտական կարողունակությունները: Հանրակրթության կազմակերպման մեջ այդ վերաբերմունքը արտահայտվում է տարբեր բնագավառի գիտելիքների միավորումով ինտեգրացված դասընթացների ստեղծման մեջ, ինչպես նաև տարբեր առարկաների ուսուցման ժամանակ ուսուցիչների առջև դրված ինտեգրացված դասեր կազմակերպելու պահանջով: «Ինտեգրված դասը հզոր խթան է հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար և սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխուժություն: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը:

Ինտեգրված դասի առավելություններն են՝

- Բարձրացնում է սովորողների մոտիվացիան, ձևավորում է ճանաչողական հետաքրքրություն, որը նպաստում է ուսումնառության մակարդակի բարձրացմանը:
- Երևույթը, առարկան դիտարկում է տեսական, գործնական, կիրառական տեսանկյուններից:
- Նպաստում է գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը, օգնում է խորապես հասկանալ բառի նշանակությունը
- Թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի ներգրավել ակտիվ աշխատանքի մեջ դասի յուրաքանչյուր պահի:
- Սովորողի մոտ ձևավորում է վերառարկայական ռացիոնալ հմտություններ: Ինտեգրված դասը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

Այդ դասերի ընթացքում ուսուցիչը պետք է կարողանա աշակերտի համար ապահովել՝

1. ուսումնական նյութի բազմաշերտ ընկալում
2. սովորողների գիտելիքների, փորձառությունների և հմտությունների համատեղում,
3. գիտական աշխարհայացքի ձևավորում:

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary) :

Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողունակություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ

համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Ինտեգրված դասի հիմնական նպատակը դպրոցականի մոտ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացում ստեղծելն է, այսինքն՝ սովորողի աշխարհայացքի ձևավորումը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,

2.համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,

3. ինտեգրման ձևը,

4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,

5. նյութի հաջորդականության կառուցվածքը,

6. նյութի ներկայացման միջոցները,

7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,

8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը,

որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90 րոպե): Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը:

Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում: Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ:

1.2.ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ

Միջառարկայական կապը միավորված (ինտեգրված) ուսումնական ծրագրերի տեսակներից է: Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում,

ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ գործոն է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այս մոտեցման հիմնական վճռորոշ գործոնն այն է, որ ուսումնական առարկաները տարանջատված չեն միմյանցից, այլ սերտորեն փոխկապակցված են թեմայով, առանցքով:

Միջառարկայական կապերը լավագույնս նպաստում են.

- սովորողների մոտիվացիայի բարձրացմանը,
- ուսուցանվող թեմայի առավել խոր ուսումնասիրմանը,
- տեսական գիտելիքների գործնական ամրապնդմանը,
- ուսումնական գործընթացում տրամաբանորեն փոխկապակցված գործողություններով (համեմատում, ընդհանրացում, համադրում, զուգորդում, վերլուծում և այլն) սովորողների նպատակաուղղված աշխատանքի կազմակերպմանը,
- սովորողների հետաքրքրության առաջացմանը:

Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է ստեղծում խնայելու ժամանակը, սովորողների ընդհանուր ուսումնական կարողունակությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծելու նպաստավոր պայմաններ:

Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն ապահովում է բնագիտական և հումանիտար առարկաների փոխադարձ կապը, և դրանց կապը՝ կյանքի հետ: Պատմության ուսուցիչը, այլ առարկաների ուսուցիչների հետ համագործակցելով, միջառարկայական կապերի միջոցով իրականացնում է ուսումնադաստիարակչական խնդիրների ամբողջական լուծում:

Ուսուցման պրոցեսում աշակերտների գործունեության և պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների համապատասխանությունից կախված՝ նյութը և մեթոդներն ընտրելիս անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել տվյալ դասարանը, նրա խմբերը կազմող աշակերտների հնարավորությունները, պահանջմունքները, շարժառիթները և հետաքրքրությունները: Դասապրոցեսի կազմակերպման բնույթը աշակերտներին մղում է ակտիվորեն արտահայտվելու, բանավիճելու, իրենց մտքերը շաղկապված, պատկերավոր, համոզիչ և հիմնավորված շարադրելու:

Միջառարկայական կապերի իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Գործադրվող մեթոդները պետք է նպաստեն ինքնակրթության կարողությունների ձևավորմանը: Ուսումնական մեթոդների համակարգում պետք է հստակորեն արտացոլվի ուսուցչի և աշակերտների գործունեության փոխադարձ կապը: Պետք է օգտագործվեն ուսուցման մեթոդների ոչ միայն ուսուցողական, այլև զարգացնող և դաստիարակող գործառույթները:

Միջառարկայական կապերի օգտագործումը դիտվում է որպես արտադասարանական աշխատանքների կրթական և դաստիարակչական նշանակության բարձրացման օպտիմալ միջոց: Արտադասարանական աշխատանքներում լայնորեն օգտագործվում են հարակից առարկաներում ուսումնասիրվող փաստերը, հասկացությունները, օրինաչափությունները: Կարելի է առանձնացնել միջառարկայական կապերի իրագործման ձևերից հետևյալները՝ տնային հանձնարարություն այլ առարկաներից, միջառարկայական բնույթի խնդիրների լուծում, գործնական աշխատանքների իրականացում, միջառարկայական կապերի իրագործում արտադասարանային պարապմունքների ժամանակ (խմբակներ, վիկտորինաներ, ՈՒՀԱ, թեմատիկ երեկոներ և այլն), միջառարկայական բովանդակությամբ միջոցառումներ (կոնֆերանս, բանավեճ, համադպրոցական երեկո,օլիմպիադա և այլն):

Դասին ուսուցչի բարձր մակարդակով նախապատրաստվելու ցուցանիշերից մեկը դասանյութի համակողմանի վերլուծությունն է, որի ժամանակ աշակերտներին տնային առաջադրանքները տրվում են, պահանջելով՝ հենվելով մի առարկայից յուրացրած գիտելիքների վրա, բացատրել այն փաստերն ու երևույթները, որոնք ուսուցանվում են այլ դասընթացներում:

Միջառարկայական կապերով դասի գնահատման և վերլուծության համար կարելի է կիրառել հետևյալ չափանիշերը.

1. ուսումնադաստիարակչական խնդիրների ձևակերպման մեջ միջառարկայական կապի առկայության արտացոլում,
2. դասին կիրառվող բովանդակային տեղեկատվական միջառարկայական կապերի տեսակները (այլ առարկաներից հետաքրքրող կոնկրետ փաստեր,

հասկացություններ, օրենքներ, հարցեր),

3. միջառարկայական կապերի իրականացման մեթոդներ և հնարներ, դրանց համապատասխանությունը դասի ուսումնադաստիարակչական պահանջներին:

Հումանիտար առարկաների ուսուցման արդյունավետության բարելավման համար կարևոր է այդ առարկաների միջառարկայական և ներառարկայական կապերի զարգացումը և ինտեգրումը: Այդ կապերի ուսուցումը նպատակ է հետապնդում

- Ընդլայնել կապերի գործնական, կիրառական ուղղվածությունը և դարձնել այն ավելի հետաքրքիր
- Ընդգրկել ինտեգրված դասապրոցեսում բնագիտական, պատմական նյութեր
- Միջառարկայական և ներառարկայական կապերով զարգացնել գիտական լեզվատրամաբանական մտածողությունը և բնությունը ճանաչելու ունակությունները:
- Կազմել հումանիտար միջառարկայական կապերով թեստեր
- Դասապրոցեսներում կազմակերպել փոքրիկ բանավեճեր պատմություն,հայոց լեզուն և գրականությունը, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն բազմաբնույթ թեմաներով:
- Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծել տեղեկատվական դաշտ:

ԳԼՈՒԽ 2.

2.1.ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մեր հարափոփոխ աշխարհում նոր դրսևորումներ և նշանակություն է ստանում առարկաների և գիտության համագործակցությունը՝ միջառարկայական կապերը, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են;Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին <<Մեծ Դիդակտիկա>> աշխատության մեջ նշում է,որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև կապերը. <<Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել

մատնացույց անելով պատճառները,այսինքն ՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում,այլ նաև ցույց տալ,թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապվածության մեջ>>: Այսօր դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիրակության իրականացումն առանց միջառարկայական կապի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրության բարձրացման: Այն ամենից շատ ու ամենից արդյունավետ կարելի է իրականացնել պատմության դասերին, պատմության միջոցով, պատմության միջնորդությամբ: Եթե միջառարկայական կապերը ճիշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ապա դրանք կարող են դասապրոցեսի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը դարձնել երկրորդական ու անկարևոր: Գիտելիքների ձեռքբերումը և կարողունակությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք է ու ելակետ: Միջառարկայական կապերը շատ օգնում են պատրաստի գիտելիքի, հաստատական կամ ժխտական պնդումների հետ զուգահեռ սովորել ճիշտ հարցեր տալ:

Այսպիսով միջառարկայական կապերը ուսուցման գերծընթացի այն կարևորագույն օղակներն են, որոնք նպաստում են ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

ԿԱՊԵՐԸ , ԴՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ

Առարկա Պատմություն	Միջառարկայական կապ	Առարկա գրականություն
Դասընթաց Հին աշխարհիպատմություն	Ներառարկայական կապ	Դասընթաց Միջին դարերիպատմություն
Վարդանանց պատերազմ	Ներդասընթացային կապ	Վահանանց պատերազմ

Միջառարկայական կապեր իրականացնելու համար ուսուցիչը ձևերի, մեթոդների ու հնարների մեծ ընտրություն ունի: Այս դեպքում կարևոր են սովորողների տարիքային առանձնահատկությունները և պատրաստվածության աստիճանը հաշվի առնելը, ինչպես նաև կապերը բացահայտելու և օգտագործելու համար հետաքրքրությունները մշտապես խրախուսելը: Հաջողված դասի էական հատկանիշներն են ամբողջականությունն ու կազմակերպչական հստակությունը: Դա կախված է թե՛ ուսուցչի, և թե՛ սովորողների պատրաստվածությունից: Դասի կազմակերպված անցկացման հստակ պայման է անհրաժեշտ ստեղծագործական, ուսումնական մթնոլորտի ստեղծման, ամբողջ դասարանի և առանձին աշակերտների կողմից հետաքրքրության առաջացման և այն պահապնելու ուսուցչի կարողունակությունը: Ասել է թե պատմության յուրաքանչյուր հաջողված դասին բնորոշ հիմնական գծերն են տեսական և մեթոդական բարձր մակարդակը, ուսուցչի առաջատար դերի ու սովորողների ուսումնական ակտիվ գործունեության համակցումը, ինչպես նաև աշակերտակենտրոն դասապրոցեսը: Այն նաև բնութագրվում է ուսոցչի և սովորողների համատեղ ստեղծագործական աշխատանքի սերտ փոխներգործությամբ, որի հիման վրա կարելի է հասնել գլխավոր խնդրի լուծմանը՝ սովորեցնել, դաստիարակել, զարգացնել: Պատմությունը այն առարկաներից է, որը միջառարկայական կապերի շնորհիվ աշակերտի մոտ ձևավորում է ինտելեկտ և արժեհամակարգ: Ուսուցման մեթոդները հնարավորություն են տալիս ուսուցչին իրականացնել շերտավոր դասապրոցես և բոլորին ներգրավել:

ՄԻՋԱՌԱՐԿՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ



Միջառարկայական թեմաների օգնությամբ կարևորվում են ձևավորվող կոմպետեցիաները, որոնց ստեղծմանը նպաստում են նախագծային, հետազոտական, գործնական մեթոդների կիրառումը, տարբեր առարկաների ինտեգրումը: Այս կոմպետեցիաները իրենց մեջ ներառում են ոչ միայն դասական գիտություն կամ առարկայի ոլորտ, այլև ամբողջական բովանդակություն ունեցող թեմա, ինչպես օրինակ՝ «Մեդիագրագիտություն», «Գլոբալիզացիա», «Բնագիտություն» և այլն: Վերջիններս ներկայացնում են բազմաբնույթ գիտելիքներ և կարողունակություններ, որոնց ձևավորումը պահանջում է ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտությունների իմացություն: Սրանք նպաստում են սովորողների մտահորիզոն

մեծացմանը, ավելի հետաքրքիր ու իմաստավորված են դարձնում նրանց սովորելու, մտածելու գործընթացը: Շատ հաճախ միջառարկայական կապ կարելի է ստեղծել գրականության հետ. յուրաքանչյուր ժամանակաշրջան բնութագրելիս կարելի է անդրադարձ կատարել պատմավեպերին: 8-րդ դասարանում թուրք-թաթարական խռովություններն անցնելիս անդրադարձ կատարել Թումանյանի գործունեությանը, Նեմեսիսի գործունեությունը ներկայացնելիս՝ անդրադառնալ Ավ. Իսահակյանին: Պատմության և հասարակագիտության ինտեգրումը աշակերտի մոտ ձևավորում են համամարդկային արժեքներ, ազգային ինքնագիտակցություն, պետական մտածողություն, կարևորվում է պետության դերը հայապահպանության գործում: Կարևոր է, որ որպես վերջնարդյունք ամրագրվեն ՀՀ օրենսդրության պահանջները հայրենիքին: Այս ամենը շատ լավ զուգահեռվում է, երբ ուսումնասիրվում են «Նոր տետրակ ,որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» հրապարակախոսական և ծրագրային աշխատությունները: Հետաքրքիր է նաև հասկացությունների մեկնաբանությունները, երբ օրինակ 1915թ.-ի ինքնապաշտպանական մարտերը անցնելիս գոյամարտը ներկայացնում ես որպես հավաքական հասկացություն և դիտարկում խաչվող և ներառման հարաբերություններում.

Գոյամարտը ներառման հարաբերության մեջ



Ցանկացած պատերազմ քննարկելու ժամամանակ անխուսափելի է կապը ռազմագիտություն առարկայի հետ: Այստեղ կարևորվում են տարբեր ժամանակներում զորքի կառուցվածքի, զինատեսակների մասին գիտելքիները, հնարավոր է դառնում

հասկանալ ճիշտ մարտավարության կիրառության արդյունքում ճակատամարտերում տարած հաղթանակները (օրինակ Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտերը):

6-րդ դասարանում նախնադար թեման ուսումնասիրելիս անդրադարձ է կատարվում քիմիային և ֆիզիկային: Երբ ուսումնասիրում ենք մետաղների դարաշրջանը, ներկայացնում ենք պղնձի, երկաթի ֆիզիկական և քիմիական հատկանիշները, բրոնզի ստացման եղանակը:

Բոլոր ժամակաշրջանների մշակույթ թեմայի հետ կապված քննարկումները առնչվում են արվեստի գրեթե բոլոր ճյուղերի հետ: Նպատակահարմար է հանձնարարել նախագծային աշխատանքներ, պատրաստել սահիկաշարեր և անցկացնել ինտեգրված դասեր, որի ընթացքում կինչի ասմունք, աշակերտները կլսեն տարբեր ժանրի երաժշտություն, կծանոթանան գույների աշխարհին:

Ֆունկցիաների միջոցով բավականին տեսանելի և ուսանելի է քննարկել արքայատոհմերի վերելքների և վայրէջքների ժամանակաշրջանները, ինչպես նաև սփյուռքայաների ներգաղթը կամ արտագաղթը տարբեր ժամանակահատվածներում:



Մեր օրերում կրթությունը և առհասարակ ցանկացած հարաբերություններ հնարավոր չէ պատկերացնել առանց համացանցի: Յուրաքանչյուր երեխա մեծ հետաքրքրությամբ պատրաստակամ կլանում է նոր գիտելիքները և հմտությունները:

Ուսուցման ավանդական և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների համադրումը հարստացնում է ուսուցման բովանդակությունը, դարձնում այն որոնողական և տրամաբանական բնույթի: ՏՏ ուսուցման առանձնահատկությունն այն է, որ գործունեության կենտրոնն աշակերտն է, ով ելնելով իր անհատական ընդունակություններից և հետաքրքրություններից ՝ կառուցում է իր ուսուցման գործընթացը: ՏՏ կիրառման առավելություններն են՝

1. ուսումնական նյութի առավել մատչելի և հասկանալի մատուցում
2. հետազոտական գործունեության իրականացում
3. ուսուցման տարակարգված մոտեցում:

Ներկայացնենք ինտեգրված դասի թեմատիկ պլանավորման օրինակ՝ «Հայոց ցեղասպանություն» թեմայով: Դասի ընթացքում պետք է անդրադարձ կատարվի թեմայի պատմա-մշակութային նկարագրությանը և բնորոշմանը, պատմական օրինակների վերլուծությանը և համապատասխան գրական ստեղծագործությունների վերլուծությանը, որոնց մեջ արծարծվում է Ցեղասպանության թեման և պատմական իրադարձությունները:

Դասի ընթացքում առանձնացվել է հետևյալ առարկայախումբը, որի մեջ անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանություն թեմային՝ այն ուսումնասիրելով տարբեր տեսակետներից.

- Պատմություն
- Գրականություն
- Մաթեմատիկա
- Կենսաբանություն
- Աշխարհագրություն
- Հայոց եկեղեցու պատմություն
- Հասարակագիտություն

Դասի սեղմագիր: Աշակերտները կուսումնասիրեն ցեղասպանության ծագման պատմությունը, դրա պատմական զարգացումները, ինչպես նաև կանդրադառնան հայ գրողների այն ստեղծագործություններին, որոնք առնչվում են հայոց ցեղասպանությանը:

Դասի ընթացքում աշակերտները կյուրացնեն հետևյալ հիմնական հմտությունները.

- Կկարողանան բացատրել ցեղասպանություն հասկացությունը,կարևորագույն փաստերը
- Կկարողանան բնորոշել հայոց ցեղասպանությունը, որպես սոցիալական երևույթ, արտահայտել սեփական կարծիքը և դիրքորոշումը աշխարհում տեղի ունեցող երևույթների մասին, մեկնաբանել սեփական հույզերը և հոգեբանական ապրումները, որոնք առաջանում են Հայոց Մեծ Եղեռնի մասին խոսելիս և դրանք քննարկելիս;
- Կկարողանան հավասարակշռված և հիմնավորված դատողություններ կատարել թեմայի շուրջ խոսելիս;
- Կկատարեն խմբային և անհատական ինքնուրույն աշխատանքներ
- Համապատասխան նյութեր կգտնեն ոչ միայն պատմության դասագրքերում, այլև համապատասխան գրական ստեղծագործություններում, համացանցում, ինչպես նաև զուգահեռներ կտանեն իրական պատմական դեպքերի և դրանց մեկնաբանությունների միջև;
- Կկարողանան համեմատել և միջառարկայական կապեր գտնել պատմական դեպքերի միջև թեմայի վերաբերյալ.

Օրինակ՝ «Պատմություն» առարկայից աշակերտները կներկայացնեն 1914-1915 թվականների քաղաքական իրավիճակը, պատմական իրադարձությունները եւ զարգացումները, կբեմադրեն Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը: «Հասարակագիտություն» առարկայից կխոսեն մարդկանց իրավունքների եւ դրանց ոտնահարման մասին: «Աշխարհագրություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Երաժշտություն» առարկաներից աշակերտները կհիշատակեն այն քաղաքների, գյուղերի անունները, որոնք հայաթափվեցին եւ ավերվեցին, քարտեզի վրա ցույց կտան այն երկրները, որտեղ ապաստանեցին եղեռնից փրկված հայերը եւ ստեղծեցին հայկական սփյուռքը, կներկայացվեն այն երկրները, ԱՄՆ-ի այն նահանգները, որոնք ճանաչել են ցեղասպանությունը: Տեսանյութերի միջոցով կցուցադրվեն այն եկեղեցիները, որոնք մնացին թուրքերի ձեռքում եւ ավերվեցին: Կհիշատակվեն այն հոգևորականների և մտավորականների անունները, ովքեր զոհ գնացին թուրք մարդասպաններին: Իսկ Կոմիտասի մասին կներկայացվեն կենսագրական

տեղեկություններ, կինչի կոմիտասյան երգն ու երաժշտությունը: «Մաթեմատիկա» առարկայից աշակերտները կլուծեն ֆունկցիաներ և, օգտագործելով տառերի թվային արժեքը, կստանան «Հիշում եմ եւ պանաջում» նշանաբանը, կներկայացնեն, թե որ երկրում հիմա քանի հայ է ապրում, կհաշվեն, թե որքան կկազմեր այժմ հայ բնակչությունը, եթե չլիներ ցեղասպանությունը: «Կենսաբանության»առարկայից կներկայացնեն «Անմոռուկ» ծաղիկի կառուցվածքը, օգտակար նշանակությունը, նաև կբացատրվի «Անմոռուկ» նշանակությունը՝ որպես Մեծ եղեռնի զոհերի հիշատակման խորհրդանիշ: Կխոսվի համաճարակների, հիվանդությունների մասին, որոնք առաջացան Մեծ Եղեռնի հետևանքով: Թեման կեզրափակվի «Գրականություն» առարկայով՝ կբեմադրվի հատվածներ Պ. Զեյթունցյանի «Վերջին արևագալը» գրքից, աշակերտները կասմունքեն Հ. Շիրազի «Հայոց դանթեական»-ից, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ռ. Սևակի ստեղծագործություններից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն քաղաքացու գործունեության, հասարակության և պետության հիմքն է; Ուստի պատմություն դասավանդող ուսուցչի պատասխանատվությունը կրկնակի մեծանում է: Թեև տարաբնույթ վերապատրաստումները շատ նպաստում են ուսուցչի ինչպես գիտելիքների, այնպես էլ փորձի կատարելագործմանը, այնուամենայնիվ ուսուցման գործընթացն ընդհանրապես, և դասավանդումը , մասնավորապես , ստեղծագործական պրոցես է: Ըստ իս, այն պահանջում է ինքնատիպ ու արդյունավետ գործելաոճ , միտք, կարողունակությունների լայն շրջանակ, մշտապես ինքնակրթվելու պահանջ, ի վերջո, բարություն, հանդուրժողականություն , մեծ սեր երեխաների հանդեպ և մեծ պատասխանատվություն երկրի առջև:

Ուսումնասիրելով ինտեգրումը որպես պատմական գիտելիքների ամբոջացման կարևոր միջոց, պարզ է դառնում, որ գիտելիքների ձեռքբերումն ու կարողունակությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ: Երեխաներին բազմաթիվ տեղեկություններ փոխանցելը պատմության դասաժամերին չպետք է լինի ինքնանպատակ : Որպեսզի այդ ամենը դառնա գիտելիք և երեխան կարողանա այն կիրառել, պետք է սովորեցնել նրան գտնել կապը մյուս առարկաների հետ՝ համադրել և հակադրել հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձությունները, փաստերն ու գաղափարները, ձևավորել վերլուծական միտքը, զարգացնել ճանաչողական ակտիվությունը, երևակայությունը: Կրթության զարգացման համար, որի կարևորագույն մասն է պատմության դասավանդումը, միայն մարդկային կապիտալը բավարար չէ: Մեր օրերում առաջնահերթ է նրանց մասնագիտական կոմպետենտությունը, որի շնորհիվ հնարավոր է դառնում ուսուցումը դարձնել ճկուն, մոտիվացված, գիտելիքահեն և կիրառելի:Այս ամենի շնորհիվ ձևավորվում է ազգային ինքնագիտակցություն ու մտածողություն, պատասխանատվություն ունեցող հայրենասեր անձ ու քաղաքացի:

Այսպիսով՝ ինտեգրված դասը տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն է՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում առաջ է բերում բարձր արդյունավետություն ունեցող, սովորողին բազմակողմանի գիտելիքներով, կարողունակություններով և հմտություններով ապահովող դաս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Խ. Հարությունյան, Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970, 293 էջ:
2. «Հանրակրթության պետական չափորոշիչ», «Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներ», 2011, էջ 21:---տեղադրել նոր չափորոշչի հղումը
3. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. - Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի աշակերտների համար: Մանկավարժ հրատ.: Երևան 2005թ.
4. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Եր., 2013, – 49 էջ:

5. Максимова В. Н. Межпредметные связи в процессе обучения. – М.: Просвещение, 1989г. – 100 с.

6. Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001, 231 с.